ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-ԻՑ 16-Ը
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանուն.

Արամ Խաչատրյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, ք. Պեկին, ք. Դաթուն, ք. Յանգաո 2024 թվականի նոյեմբերի 11-ից 16-ը:

4. Հրավիրող կողմը.

«Շանսի-Նաիրիտ» հայ-չինական համատեղ ձեռնարկության տնօրենների խորհրդի նախագահ Սի Ծինմին:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

«Շանսի-Նաիրիտ» հայ-չինական համատեղ ձեռնարկության տնօրենների խորհրդի 8-րդ լիագումար նիստին և համատեղ ձեռնարկության բոլոր բաժնետերերի ժողովին մասնակցելու նպատակ:

6. Քննարկված թեմաները.

ՀՁ-ի Բաժնետերերի ժողովի օրակարգային հարցերը.

1. ՀՁ-ի չինական կողմի տնօրենների խորհրդի անդամների նշանակման և ազատման հարցերի քննարկում:
2. ՀՁ-ի 2023թ.-ի արտադրական և տնտեսական գործունեության և 2024թ.-ի արտադրական և տնտեսական գործունեության ծրագրի վերաբերյալ քննարկում:
3. ՀՁ-ի 2023թ.-ի ֆինանսական հաշվետվության քննարկում և 2024թ.-ի ֆինանսական բյուջետային ծրագրերի վերաբերյալ քննարկում:
4. ՀՁ-ի 2023թ.-ի սահմանված ներդրումային ծրագրի կատարման և 2024թ.-ի ներդրումային ծրագրի վերաբերյալ քննարկում:
5. ՀՁ-ի կանոնադրության փոփոխության նախագծի քննարկում:

ՀՁ-ի Տնօրենների խորհրդի տարեկան նիստի օրակարգային հարցերը.

1. ՀՁ-ի մտավոր սեփականության խախտման վերաբերյալ դատական գործով հաշտության համաձայնություն ձեռք բերելուց հետո հետագա հարցերի ուսումնասիրում և քննարկում:
2. ՀՁ-ի կալցիումի կարբիդի խարամի և կաթսայի խարամի վերամշակման ներդրումային ծրագրի ուսումնասիրում և քննարկում:
3. ՀՁ-ում հայկական կողմից կադրերի պաշտոնի նշանակման հարցի ուսումնասիրում և քննարկում:
4. Արտասահմանյան շուկայում հայկական մասի բաժնետիրոջը կաուչուկների վաճառքի չափաքանակի հատկացման հարցի ուսումնասիրում և քննարկում:
5. ՀՀ-ում «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ի համատեղ վերագործարկման հարցի ուսումնասիրում և քննարկում:
6. ՀՁ-ի շահութաբերության առաջարկվող չափի բաշխման հարցերի ուսումնասիրում և քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նիստերի մասնակցում էին նաև ՉԺՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Վ. Գևորգյանը և ՉԺՀ-ում ՀՀ դեսպանության առևտրական կցորդ պարոն Կ. Ղազարյանը: Կողմերը հանդես եկան ելույթներով, փոխանակվեցին մտքերով և առաջարկություններով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ՀՁ-ի Բաժնետերերի ժողովի օրակարգային հարցերի վերաբերյալ:

1-ին կետի վերաբերյալ – Չինական կողմը ներկայացրեց ՀՁ-ի Տնօրենների խորհրդի երեք անդամների փոփոխություն, մասնավորապես Տնօրենների խորհրդի անդամներ՝ Լու Վեյին, Վան Սյուդունին և Լի Յանբինին առաջարկվեց ազատել և փոխարենն առաջարկվեց նշանակել Վան Չժունխային, Չեն Դեյյանին և Շի Շոին որպես ՀՁ-ի Տնօրենների խորհրդի անդամներ:

2-րդ հարցի վերաբերյալ – Չինական կողմը ներկայացրեց ՀՁ-ի 2023թ.-ի արտադրական և տնտեսական գործունեության և 2024թ.-ի արտադրական և տնտեսական գործունեության ծրագրի վերաբերյալ հաշվետվություն, մասնավորապես նշելով 2023թ-ի ընթացքում գործարանի արտադրական և տնտեսական գործունեության իրավիճակը, 2023թ.-ի մոտ 12 խնդիրների կատարման ընթացքները, որոնք հանգեցրել են արտադրական հզորությունների որոշակի ավելացման, քլորոպրենային կաուչուկի արտադրման ծախսերի նվազման, մարկետինգային գործունեության ընդլայնման, ինչպես նաև ծախսերի վերահսկման ուղղված աշխատանքներին: Նշվեց նաև 2024թ.-ի հիմնական աշխատանքային միջոցառումները, որոնք նպատակաուղղված են լինելու ՀՁ-ի բարձրակարգ գործունեության ապահովմանը, որակի և բիզնեսի արդյունավետ պայմանների բարելավմանը, ավելացնել ապրանքատեսակների վաճառքի քանակների մեծացումը և մեծացնել եկամուտները:

3-րդ և 4-րդ հարցի վերաբերյալ – Հայկական կողմը ներկայացրեց իր դիտարկումները նշված հարցերի վերաբերյալ, որից հետո կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին, որ չինական կողմը կներկայացնի հայկական կողմին ՀՁ-ի 2023թ.-ի ֆինանսական գործունեության և 2024թ.-ի ֆինանսական բյուջետային ծրագրերի, 2023թ.-ի սահմանված ներդրումային ծրագրի կատարման և 2024թ.-ի ներդրումային ծրագրի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն՝ հիմնավորումներով: Այն ներկայացնելուց հետո հայկական կողմը կուսումնասիրի այն և հնարավորինս կարճ ժամանակահատվածում կարտահայտի իր դիրքորոշումը:

5-րդ հարցի վերաբերյալ – Չինական կողմը առաջարկեց ՀՁ-ի կանոնադրության մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես կանոնադրության 2-րդ գլխի 8-րդ հոդվածի վերջում ավելացնել «հիմնական քիմիական հումքի արտադրություն, ջերմային էներգիայի արտադրություն և մատակարարում, բնական ջրերի կուտակում և բաշխում, քիմիական արտադրատեսակների արտադրություն, քիմիական արտադրատեսակների իրացում» դրույթները: Սակայն հայկական կողմը խնդրեց չինական կողմին ներկայացնել նախորդ անգամ կանոնադրության նույն կետում կատարված փոփոխությունների արտացոլումը կանոնադրության մեջ, որից հետո հայկական կողմը պահանջեց իրավական հիմքեր ներկայացնել վերոնշվածը Չինաստանի առևտրային պալատի կողմից հաստատված կանոնադրությունում չընդգրկվելու հանգամանքները: Այն ներկայացնելուց հետո հայկական կողմը կներկայացնի իր դիրքորոշումը:

ՀՁ-ի Տնօրենների խորհրդի տարեկան նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ.

1-ին կետի վերաբերյալ – Չինական կողմը ներկայացրեց ՀՁ-ի մտավոր սեփականության խախտման վերաբերյալ դատական գործով հաշտության համաձայնություն ձեռք բերելուց հետո հետագա գործընթացը, որի վերաբերյալ հայկական կողմը ներկայացրեց իր որոշ հարցերի նկատմամբ առանցքային անհամաձայնությունը: Կողմերը համաձայնության եկած տվյալ հարցի քննարկումը անմիջականորեն քննարկել համատեղ 6-րդ հարցի հետ միասին: Չինական կողմից բերվող բանավոր փաստարկները համոզիչ չէին հայկական կողմի համար: Ուստի հայկական կողմը առաջարկեց չինական կողմին մեկ շաբաթյա ժամանակահատվածում հայկական կողմին գրավոր ներկայացնի իր դիրքորոշումները 1-ին և 6-րդ հարցերի մասով՝ բերելով օրենսդրական համապատասխան հիմնավորումների դրույթները: Հայկական կողմն այն գրավոր ստանալուց հետո կարտահայտի իր դիրքորոշումը և չինական կողմին կհայտնի իր հետագա գործողությունների մասով:

2-րդ հարցի վերաբերյալ – Չինական կողմը ներկայացրեց ՀՁ-ի կալցիումի կարբիդի խարամի և կաթսայի խարամի վերամշակման ներդրումային ծրագրի դրույթները և տեղեկացրեց հայկական կողմին, որ ելնելով բնապահպանական խնդիրների իրականացման անհապաղ գործունեություն ծավալելու անհրաժեշտությունից որոշակի աշխատանքներ ՀՁ-ն արդեն նախաձեռնել է: Սակայն հայկական կողմը առաջարկեց չինական կողմին ներկայացնել առավել մանրակրկիտ տնտեսական հիմնավորում կատարվող աշխատանքների գնի մասով, որի մասով կողմերի միջև ձեռք բերվեց համաձայնություն:

3-րդ և 4-րդ հարցի վերաբերյալ – Հայկական կողմը առաջարկեց չինական կողմին, որ մինչև տարեվերջ չինական կողմին կներկայացնի ՀՁ-ն հայկական կողմից համապատասխան պաշտոնների թեկնածուներ, ինչպես նաև հայկական մասի բաժնետիրոջը կաուչուկների վաճառքի չափաքանակի հատկացման մեխանիզմները:

5-րդ հարցի վերաբերյալ – Ելնելով 1-ին կետում ներկայացված քննարկումների հանգամանքից և բարձրացված հարցերին լուծում տալու ընթացքից հայկական կողմը առաջարկեց առկախել 5-րդ կետի քննարկումը և վերադառնալ նշված հարցի քննարկմանը 1-ին և 6-րդ կետերի մասով որոշումներ ընդունելուց հետո միայն:

Ստորագրված փաստաթղթեր առկա են/չեն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կողմերը պայմանավորվեցին, որ հայկական կողմը հարցերի ամբողջ փաթեթը առաջարկություններով և դիտարկումներով կներկայացնի Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, ՀՁ-ի հայկական կողմի համանախագահին, որից հետո կներկայացվի հայկական կողմի վերջնական դիրքորոշումները:

Վերոնշյալ հարցերը համապատասխան դիրքորոշումներ ներկայացնելուց առաջ բանավոր, աշխատանքային կարգով քննարկվել են նաև ՉԺՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վ. Գևորգյանի հետ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

Իրավաբանական վարչության պետ՝

Ա. Խաչատրյան

21.11.2024թվ.